3. ***Դատական ծախսերի վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.***

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածը, 109 հոդվածի 1-ին մասը, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման և ներկայացված հայցադիմումի համար Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված չափին համապատասխան պետական տուրք, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

## IV
## (ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով՝ Դատարանը*

## Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Թեյսթի Գրուպ>> ՍՊԸ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 23.11.2022թ.-ին հայտարարված թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված <<Թեյսթի Գրուպ>> ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ

*Մանրթություն- եզրափակիչ դատական ակտը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:*

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ